Լևոն Խեչոյան

Թթու խնձորներ

Փողոց: Մեկական պայուսակ ձեռներին՝ այդքան ճանապարհը ոտքով են վերադարձել, երկուսն էլ հոգնած են: Երկար, անընդհատ օրվա արեւը մայր մտնելուց հետոյի ժամանակն է՝ ոչ լույս, ոչ մութ: Միատարր, միապաղաղ երանգով, լուսնային կապտաճերմակ գույնով: Պաղ կապույտ: Ձայն՝ սկսվում է մոծակի բզզոցի տոնայնությունից: Միալար ձայն՝ ամեն տեղ կա: Աճում է, չպարզված գվվոց է դառնում հողի մեջ, օդի, տարածության… դեռեւս չհստակեցված, շատ հեռու քառատրոփ է:

Ավտոբուսի վերջին կանգառում երկու պատանիներ՝ կարմիր գլխարկներով, դեմքները չձեւավորված, միաժամանակ աղջնակ հիշեցնող: Նրանց հետ՝ երկուսը հեծանիվներով, մեկը իր եղբոր տղան է: Չորսով խնդրել էին նրան հեծանիվի դողեր բերել քաղաքից:

Նրանք հաղորդում են, որ իր երեքամսյա բացակայության ժամանակ բժիշկը նրանց տանը՝ իր մահճակալին էր քնում: Թոչում են, հեծանիվները նկատվում են, չեն նկատվում, վերացական են, հեռվից նիկելի փայլատակող ճերմակ, ոտնակների կողքից կողք ընկնելով՝ ավելի հեռվում են, միաժամանակ, չղջիկի թեւերի թափահարում են հիշեցնում:

Նրանցից հետո՝ հեռագրասյունը:

Մինչեւ տուն նրանք ոտքով են գնում: Ցանկապատի դուռն են բացում, պայուսակները դնում են գետնին, տեսնում է՝ կինը տան կտուրին է, ծառից թթու խնձորներ է պոկել, ուտում է, աչքերի խորքում պեծկըլտոց կա, այդ կայծերին

հասնելը Մինասին անհնար է:

Նույն գույնով՝ անցումային տեսարան: Մինասը, տեսարանը: Ճանապարհին մի նորածին, հողե ճամփին՝ մեջքի վրա, նորածինը կնոջ երեխան է: Նախկին ձայնը: Աճող քառատրոփ, նրան համահավասար փնչոց՝ լեռները, հողի դողը, դղրդոցը, անդունդները, ցնցումը, փոշին, ճամփեզրին աստղափշերը դողում են՝ նրանց դողէրոցքը, նրանց չորի ցնցումը: Ժամանակը նույն ժամա նակն է, անընդհատ օրվա արեւը մայր մտնելուց հետոյի ժամանակն է՝ ոչ լույս, ոչ մութ:

Բայց դրանից առաջ ուժեղ շոգ է եղել՝ տոթ, տապ, քար է ճաքել, թռչունները դեռ բաց կտուցներով են շրջում, տերեւները կրկված են: Հեռվում, շատ հեռվում կենտ մի գայլ, կարմիր լեզուն: Թեք անցնում է ճանապարհը:

Ձայնը եւ փոշու ամպ՝ աստիճանաբար աճում է հեռվի մեջ, չափավոր, շատ թույլ հիշեցնում է ատոմային ռումբի սնկին:

Սեւ, մանր կետեր: Հանկարծ՝ արջառների նախիրը: Ծնչառությունը, քառատրոփը, գալիս են: Շատ են, համատարած դաշտերով գալիս են, անչափ շատ են, ամբողջ հորիզոնը բռնել են:

Հողի գվվոցը, լեռները, անդունդները, ձորերը ցնցվում են: Ամենա բարձր լեռների գագաթներից իրենք իրենց գլաքարեր են պոկվում, կոբրա օձի ֆշշոցով սլանում են ցած:

Ինքը գիտե, որ մանուկը երեխան է, դրել են այդտեղով անցնող վայրի, խելահեղ արջառների ճանապարհին, որպեսզի նրանք ոտքերով ճզմեն:

Ձայնը, քառատրոփը, գալիս են, այս անգամ համատարած հորիզոնը բռնած, նրանց ծավալի մեջ հազիվ նշմարելի, որոշակի, մի քանի սպիտակ կետեր են նկատվում: (Մնացածը մուգ գույնի արջառներ են):

Նույն արագությունը, դմբդմբոցը, ոռնոցը շարունակվում է: Առջեւից գալիս է սպիտակ ցուլը՝ չորս ոտքերի արանքում է պահում նորածնին, մութ՝ սեւ ցուլերի նախիրն անցնում է: Անցումը խավարի ծավալ է:

Սպիտակ ցուլը՝ կոտոշների հարվածից, անգամ միայն այդչափ անցողիկ հպումից, արյունաքամ է եւ՛ գոլորշիանալու պես է, եւ՛ տապալվելու նման է: Նորածինը նրա չորս ոտքերի ու փորի տակ անընդհատ տարածվող կարմրի մեջ է, կարմիրը եւ հեղուկ է, եւ ծավալ: Ցուլը՝ կողին, հողի վրա է, ընկած է, տպավորությունը ոչ թե ընկածի է, այլ՝ ԱՆԿՅԱԼԻ:

Ընկած է, անկյալ է:

Վերացարկված նրա զանգվածը գեղեցիկ չէ: Ցլի աչքը: Աստղափշերի ֆոնին շատ որոշակի մի թռչուն է կանգնած՝ կարմրալանջիկ: Թռչում է՝ թեւերի բացվելը տարածության մեջ: Ցլի ճերմակ գույնի երկինք համբառնելը: Ճերմակ գույնը հե ծանվա - վոր սպիտակ չղջիկների երամ դարձած՝ միանում է երկնքին:

Հեռվում, շատ հեռվում՝ կենտ մի հեռագրասյունը:

Լուսանում է: Կողքին՝ քնի մեջ տնքում է կինը, դպրոցում բարձր դասարանցիները հոգնեցնում են նրան:

Ինքն ամբողջ գիշեր բաց աչքերով առաստաղին է նայել: Ուժասպառ է, այդքան ժամանակ մարտնչել է երեխայի փրկության համար:

Դրսի պղնձագույն աշունը, նրա կավագույնը: